

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

**ՀԱՅՐԵՆԻՔ ԲԱՌԻ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ.
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ**

*Անվերջ չարչարանքի եւ գերագույն մի բաղձանքի,
անվերջ զրկանքների եւ վսեմ մի հավատի
պայծառ պատկերը չէ՞ միթե մեր հոգեւոր հայրենիքի
ասպետ-զավակների կյանքը:
(Վ. Տերյան, «Հոգեւոր Հայաստան», 1914 թ.)*

Հոգեւոր հայրենիքի ջերմեռանդ ջատագով եւ հոգեւոր Հայաստանը կերտող մեր ազգային մեծություններից մեկը՝ Հովհ. Թումանյանը, «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» ուսումնասիրության եզրափակիչ մասում գրում է. «Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք. բայց թե ինչ բան է այդ հայրենիքը, ինչի մեջ է նրա թշվառությունը, ինչպես են ապրում, ինչպես են խոսում, լալիս, ուրախանում եւ այլն, նրա ժողովուրդը, ահա այդ է հարկավոր, նրանց այդ առավելությունը, այդ հատկությունը միայն կարող է նրանց ձեռնադրել հայոց բանաստեղծ¹»:

Ամենայն հայոց բանաստեղծը հայրենիքը բնորոշում է **թշվառ** բառով եւ «սահմանում», որ հայոց բանաստեղծ կարող է կոչվել միայն հայրենիքն իսկապես հասկացող եւ ժողովրդի հոգին, հոգսերն ու ուրախությունները լիովին ընկալող ստեղծագործողը: Եթե նա գուրկ է այդ կարողությունից, ուրեմն սոսկ հայ բանաստեղծ է:

Հայ մանուկը տանը եւ մանկապարտեզում հայրենիքին նվիրված երգեր ու ոտանավորներ է սովորում, դպրոցում կարդում է (հաճախ նաեւ անգիր անում) դասական եւ ժամանակակից հեղինակների բանաստեղծություններ՝ ձոնված հայրենիքին: Այդ ստեղծագործություններում հաճախ կիրառվում են բազմապիսի մակդիրներ («գեղարվեստական բնորոշումներ»²)՝ խոսքը դարձնելով առավել պատկերավոր, հուզական լիցքեր հաղորդելով ստեղծագործությանը: Այդ մակդիրներից հաջողվածները (նախադաս եւ հետադաս, փոխաբերական, նկարագրական, գունային, կայուն, անհատական եւ ընդհանուր, պարզ եւ

1 Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երեւան, 1999, էջ 85:

2 Էդ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երեւան, 1980, էջ 199:

բաղադրյալ³ եւ այլն) ժամանակի ընթացքում կարծես «մխրճվում են» հայ մարդու լեզվամտածողության մեջ, ուղղակի յուրացվելով՝ գործածվում շատերի խոսքում՝ հաճախ առանց հեղինակային պատկանելության գիտակցման անգամ, երբեմն նաեւ որպես կայուն մակդիրներ:

Մեր հետազոտությունը նվիրված է **հայրենիք** բառի մակդիրներին նոր եւ նորագույն շրջանների հայ բանաստեղծական խոսքում (անշուշտ ընտրաբար), բայց կենտրոնում Հովհ. Թումանյանն է իր «Հայրենիքիս հետ» սքանչելի բանաստեղծությամբ, որը նա գրեց 1915-ին՝ Հայոց մեծ եղեռնի նախօրեին⁴, երբ Հայաստան աշխարհի, հայոց հայրենիքի լինել-չլինելու հարցն էր օդից կախված: Այս բանաստեղծությունը բնութագրվում է բարձր գեղարվեստականությամբ եւ լուսառատ լավատեսությամբ: Այդ հատկանիշներից բացի բանաստեղծությանը բնորոշ է **հայրենիք** բառի մակդիրների ինքնատիպ գործածությունը, որ ուշագրավ մի իրողություն է:

Հայոց լեզվում ե՞րբ է սկիզբ առել **հայրենիք** բառը մակդիրով օժտելու ավանդույթը, հայ բանաստեղծական խոսքում ի՞նչ մակդիրներ են գործածվել **հայրենիք** բառի հետ⁵, գործածված մակդիրներից որո՞նք են կայունացել, եւ ի՞նչ դեր ունի այս հարցում մեծն Հովհ. Թումանյանը⁶: Պատասխանենք այս հարցադրումներին:

Նախ բառի եւ նրա առաջին մակդիրի մասին: **Հայրենիք**-ը Ե դարից գրավոր վկայված բազմիմաստ բառ է, որը հենց այդ շրջանում, ի թիվս այլ իմաստների («նախնիներ, նախահայրեր», «հայրական ժառանգություն, ինչք, ստացվածք»), գործածվել է նաեւ «հայրենի գավառ, երկիր, բնաշխարհ» նշանակությամբ⁷: Այս վերջին իմաստն աշխարհաբարում առաջինն է՝ «հայրենի երկիր, բնաշխարհ,

3 Մակդիրների տեսակների մասին տե՛ս **Ֆ. Խղաթյան**, Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 115-117: **Հայրենիք** բառի մակդիրների տեսակային դասդասում չենք կատարի՝ դա անկարելիոր համարելով: Օրինակ՝ սա բաղադրյալ մակդիր է. «*Դո՛ւ, կախարդ ուղի, հալիտյան անհայտ, հալիտյան դյուշող իմ նոր հայրենիք...*» (Ավ. Բաախակյան, «Աբու-Լալա Մահարի»):

4 Գրվել է 1915թ. հունվարին, առաջին անգամ լույս է տեսել նույն թվականի փետրվարի 8-ին «Հորիզոնի» հավելվածում (Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1988, էջ 629):

5 Հմմտ. **Դ. Գյուրջինյան**, Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք, Ս. Էջմիածին, 2015, էջ 60-62:

6 Հայ բառարանագրության անելիքներից մեկը հայ գեղարվեստական (կամ միայն բանաստեղծական) խոսքում գործածված մակդիրների բառարանի ստեղծումն է: Տե՛ս, օրինակ, **Կ. С. Горбачевич, Е. П. Хабло**, Словарь эпитетов русского литературного языка, Ленинград, 1979 (568 էջ), **С. П. Библик, С. Я. Ермоленко, Л. О. Пустовит**, Словник эпитетів української мови, Київ, 1998 (431 էջ): Մեր այս աշխատանքը հող է նախապատրաստում հայերեն այդպիսի բառարան կազմելու համար: Տե՛ս նաեւ **Թ. Հովհաննիսյանի**՝ մեր ղեկավարությամբ կատարած աշխատանքը՝ «*Այժմ բառի մակդիրները Ե. Չարենցի չափաճոյում*» (Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի հ. 2, Երևան, 2010, էջ 184-192):

7 Հմմտ. **հ. Գաբրիել Անտիբեան, հ. Խաչատուր Միրմելեան, հ. Մկրտիչ Ազեբեան**, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 34 (Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու երկերից քաղված բնագրային վկայություններով):

նախնիների դարերով ապրած երկիրը»⁸: Բառարաններից մեկը հակիրճ այսպես է սահմանում՝ «ազգի մը ծննդավայրը, բնավայրը, մայր հող, օրրան»⁹:

Հայրենիք բառը միջնադարում աչքի չի ընկել մակդիրներ ստանալու հատկանիշով, այսինքն՝ նրա կապակցելիությունը բավական սահմանափակ է եղել¹⁰: Ե դարի հայ մատենագիրների երկերում, ըստ համաբարբառների տվյալների, **հայրենիք** բառը միայն մեկ անգամ է մակդիր ստացել. «*Իսկ բարեհասցապարտուն Տրդատ յանկարծակաւ՝ կենացն առպնջական ցանկալի առնենցուն լինէր, որ աշխարհաճնունդ հայրենեացն* [բնաշխարհիկ հայրենիք] որդի գտանէր շնորհօքն Աստուծոյ, եւ յախտենական կենացն մերձաւոր լինէր»¹¹:

Հայրենիք բառով մակդրային կապակցություններ կազմվել են գերազանցապես նոր ժամանակներում: Հայ գեղարվեստական, մասնավորապես բանաստեղծական խոսքում հանդիպում են բազմաթիվ ուշագրավ, ինքնատիպ, խոսուն եւ տպավորիչ մակդիրներ, որոնք տարբեր կողմերից գեղարվեստորեն բնորոշում են հայրենիքը:

Մինչ Հովհ. Թումանյանի ստեղծագործական փորձին անդրադառնալը բնագրային մի շարք նմուշներով ցույց տանք, թե Թումանյանից առաջ արեւելահայ եւ արեւմտահայ դասականներն իրենց բանաստեղծական խոսքում ինչպիսի՞ մակդիրներ են գործածվել **հայրենիք** բառի հետ: Սա կարելու է ոչ միայն ավանդույթի մասին պատկերացում կազմելու տեսանկյունից, այլեւ ինչ-ինչ ազդեցություններ նկատելու առումով (եթե դրանք, իհարկե, կան): Ներկայացվածների մեջ են հայ նոր գրականության հիմնադիրները, հեղինակներ, որոնք մշակել են աշխարհաբարը (արեւելահայ եւ արեւմտահայ), մեծապես նպաստել հայ գեղարվեստական նոր խոսքի (եւ հայերենի առհասարակ) զարգացմանը: Այսպես.

*Քո սուրբ հողին, մեր քա՛ղցր հայրենիք*¹²,

Ծունր չորինք, մենք չպաշտեցինք... (Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի»)

⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1974, էջ 288: Վերջինս *նախնիների* փոխարեն ունի *նախնիքների* սխալ ձևը. Ստ. Մալխասյանցի *նախնիք* հնացած, բայց ճիշտ ձեւին (Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1945, էջ 41) անհարկի ավելացվել է հոգնակիակերտ – *նէր* մասնիկը:

⁹ Անդրանիկ վրդ. Կռանեան, Գործնական բառարան հայերեն լեզուի, Պէյրուժ, 1970, էջ 248:

¹⁰ Այստեղ եւս հայ բառարանագիրներն անելիք ունեն. առայժմ չունենք բառերի կապակցելիության բառարան: Հմմտ. Словарь сочетаемости слов русского языка, под ред. П. Н. Денисова, В. В. Морковкина, Москва, 1983 (686 էջ):

¹¹ Ազարանգեղայ Պատմության Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ս. Կանայանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երևան, 1983, էջ 18-19: Ի դեպ, այս նախադասությունը նույնությամբ տեսնում ենք Պ. Զեյթունցյանի «Խոր Վիրապ» պիեսում՝ Պատմիչի խոսքում. «*Իսկ երախտավոր Տրդատը, կամովին դժվար կյանք ընտրելով, առնենքին ցանկալի դարձավ, Աստուծո շնորհներով իր քնաշխարհիկ հայրենիքի որդին եղավ եւ հալիտենական կյանքի մերձավոր դարձավ*»:

¹² Ա՛խ, Հայրենիք, քաղցր ու համեղ Հայրենիք.

Միևէն ե՛րբ կարոտդ քաշելով մնամ (Զիվանի, «Երգ պանդխտի»):

Մեռյալ չե՞ն, ուրեմն, **հայ հայրենիք** մեր... (Ղ. Ալիշան, «Հրազդան»)
 Մեր **հայրենիք, թշվառ**¹³, **անտեր**,
 Մեր թշնամուց ոտնակոխ... (Մ. Նալբանդյան, «Իտալացի աղջկա երգը»)
 Մայրի՛կ Հայաստան, **սիրո՛ւն հայրենիք**¹⁴,
 Ընդունի՛ր ծոցումդ տարագիր որդիդ...
 Դեպի Գաղիա, Պարի՛զ սիրելիք,
 Դեպ մուգաների **նորոգ հայրենիք**... (Րաֆֆի, «Ո՛ր է իմ հայրենիքը»)
 Կամենոււմ էր ներս բերել
 Մեր **հայրենիք սրբազան**: (Րաֆֆի, «Հինգերորդ դարու Հայոց աշխարհի տիկիները եւ Եղիշե Ավարայրի դաշտումը»)
 Ուրեմն հիմա աղիք չ'ունի Հայաստան...
 Ա՛յ, դալկահար դու **հայրենիք**...
 Սառե աչեր, քարե լեզու, ա՛յս մնաց
 Բյուր փառքերեն մեր **գոռ ու պերճ հայրենյաց**... (Ղ. Դուրյան, «Նոր սեւ օրեր»)
 Ես հեռանում եմ, ո՛վ **մայր հայրենիք**... (Հովհ. Հովհաննիսյան, «Զինվորի մահը»)
 Անհունորեն երազեց նա **ազատ, անկախ հայրենիք**¹⁵... (Ավ. Իսահակյան, «Հայ ժողովրդի նամակը»)
 Քու հողին մեռնեմ, **անգին հայրենիք**... (Ավ. Իսահակյան, «Է՛յ, ջան - հայրենիք»¹⁶)
 Ցնծա՛, **տիտուր** իմ **հայրենիք**, ցուրտ ձմեռը անցկացավ,
 Զվարճալի խնդում քերոդ նոր գարունը մոտեցավ... (Զիվանի, «Ուրախ երգ»)

13 Հմմտ. Հեզ մարդկության մեկ ոստր գոս՝

Հայրենիք մը ունիմ թշվառ... (Ղ. Դուրյան, «Իմ ցավը»):

Մակդիրների կիրառման դեպքերն այսպես գուցադրելով՝ կարելի է պարզել, թե մեր քնարերգության մեջ այս կամ այն մակդիրն առաջինն ո՞վ է գործածել, ովքեր են շարունակել՝ այդպես ստեղծելով մակդիրի յուրօրինակ «կենսագրությունը»: Այս հարցը հետաքրքրական է նաեւ արեւելահայ եւ արեւմտահայ բանաստեղծական խոսքում պատկերավորման եւ արտահայտության միջոցների գործածության գուցադրման, նրանց ընդհանրությունների եւ առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից:

14 Այս մակդիրն ավելի ուշ հանդիպում է Հովհ. Հովհաննիսյանի «Զինվորի մահը» բանաստեղծության մեջ.

Եվ թող ես գրկած կուրծքը մայրենի,
 Քո ազատ կուրծքը, **սիրո՛ւն հայրենիք**,
 Քնանամ մինչեւ ականջիս հասնի
 Քո ազատության անուշ ավետիք:

15 Հայաստանի Հանրապետության ներկայիս օրինելի մեջ այս մակդիրները փոխարինեցին Մ. Նալբանդյանի գործածած **թշվառ, անտեր**-ին:

16 Այսօր անհնարին է պատկերացնել իսահակյանական **ազիզ հայրենիք** կապակցության գործածությունը բանաստեղծական խոսքում (նորագույն շրջանի հայ գրական լեզուն արեւելյան փոխառությունների նկատմամբ մերժողական դիրքորոշում է որդեգրել).

Ճախրեմ նոր օրվա ծեգիդ, **ազի՛զ հայրենիք**,
 Ու անո՛ւշ երգեմ, քարձր ու զիլ գովեմ
 Կանաչ արեւդ, **ազա՛ւ տ հայրենիք**...

Սույազ անտառեն էի գայն կտրեր.

- Զեզի ընծա՛, հին հայրենիք ... (Ռ. Վարուժան, «Ձոն»)

Վերոհիշյալ բնագրային վկայությունները պարզորոշ ցույց են տալիս, թե հայ բանաստեղծների համար ի՞նչ է հայրենիքը, նրանք ինչպե՞ս են ընկալում այն, եւ ինչպիսի՞ն է հայրենիքի գեղարվեստական բնութագիրը: Անշուշտ, միաժամանակ գաղափար ենք կազմում նաեւ բանաստեղծների (եւ ժամանակի) գեղագիտական եւ լեզվական ճաշակի, ընկալումների եւ հայրենիքի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի մասին:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է մեկ կարեւոր գուգահեռ եւս անցկացնել, թե ի՞նչ մակդիրներ էին գործածում հայ հեղինակներն այն նույն շրջանում, երբ գրվել է Թումանյանի հանրահայտ բանաստեղծությունը: Ահավասիկ, երկու օրինակ Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքից.

Հայրենիքում իմ արնաներկ

Գիշերն իջավ անլույս ու լուռ... («Հայրենիքում իմ արնաներկ»)

Օ, հայրենիք դառն ու անուշ: («Դու հպարտ չես, իմ հայրենիք»)

Իսկ Ե. Չարենցի համար հայրենիքը եթերային էր՝ *կապուտաշյա* («Կապուտաշյա հայրենիք»-ը անավարտ պոեմի վերնագիրն է):

Այժմ անդրադառնանք Հովի. Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությանը եւ նրանում գործածված մակդիրներին: «Հայրենիքիս հետ»-ը, թեեւ գրվել է 1915-ի սահմնկեցուցիչ իրադարձությունների նախաշեմին, անօրինակ լավատեսությամբ է տոգորված եւ լուսավոր ապագայի անսասան հույս է ներշնչում դժոխսային ուղիներով անցած հայությանը: Բանաստեղծության մեջ կյանքին բուռն սիրահարված ազգային մեծ բանաստեղծը *հայրենիք* բառի մակդիրների բոլորովին նոր եւ թարմ համակազմ է մեջտեղ բերում: Այդ մակդիրները չեն կրկնում նախորդներից ոչ ոքի. թումանյանական մակդիրներն իրենց նախադեպերը չեն ունեցել հայ գեղարվեստական խոսքի պատմության մեջ: Եվ, որ խիստ կարեւոր է, հիշյալ բանաստեղծության մեջ դրանք կիրառվել են յուրահատուկ հորինվածքով:

Խոսում է բանաստեղծության վերնագիրը. բանաստեղծն իսկապես իր հայրենիքի հետ է. նրա հետ տառապում է, նրա հետ երագում լուսավոր գալիքի մասին: Երբեմն բանաստեղծի անձը եւ հայրենիքը կարծեք նույնանում են. խոսում է հայրենիքի ցավերից, դրանք իր ցավերն են, խոսում է ողբի եւ որբի հայրենիքի մասին. ինքը 1915-ին հազարավոր որբերի հետ էր Վաղարշապատում՝ Ս. Էջմիածնում, եւ հոգ էր տանում նրանց, երագում է նոր եւ հզոր հայրենիքի մասին, որ իր եւ իր զավակների՝ ապագան է...

Բանաստեղծն առաջին տան մեջ սրտի խոր ցավով նկարագրում է «մահվան հովիտ» դարձած եւ ուժահատ հայրենիքը, իսկ հոգու հայացքը հեռուներում է.

*Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մղկոտում է սիրտս անվերջ քո թառանցից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Եվ գյուղերից, ե՛ւ շենքերից տխո՛ւր, դառարկ ու խավար,
Զարկվա՛ծ հայրենիք,
Զրկվա՛ծ հայրենիք¹⁷:*

Բանաստեղծության յուրաքանչյուր տունն ավարտվում է ընդհանրացնող երկտողով, որ մակդրային բնորոշ կապակցություններ են, տվյալ տան յուրատեսակ ամփոփում-ընդհանրացումը: Առաջինում՝ **զարկված հայրենիք, զրկված հայրենիք**:

Ապա գույները խտանում են, եւ ընթերցողի առջեւ հայոց պատմության դժնդակ ու հատկապես տվյալ շրջանի սոսկալի պատկերն է ներկայանում.

*Խռնվում են մտքիս հանդեպ բանակաները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ունակները աղադակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խնջույքներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սեւ ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:*

Մեկ միլիոնից ավելի զոհ, հարյուր հազարավոր գաղթականներ, հարյուր հազարավոր մարդկանց խեղված ճակատագրեր, տասնյակ հազարավոր որբեր, ավերված բնօրրան, որբ ու անտուն դարձած ժողովուրդ: Բանաստեղծության այս տունը եւս ավարտվում է մակդրային խոստուն ընդհանրացմամբ՝ **ողբի հայրենիք, որբի հայրենիք**¹⁸:

Սակայն բանաստեղծը հուսալքության եւ վիատության խոսք չի ասում իր «զարկված ու զրկված», «ողբի եւ որբի» հայրենիքին: Նա խորապես հավատում է հայոց գալիքին եւ հայ ժողովրդի կենսունակությանը: Անսահման լավատեսությամբ համակված՝ Թումանյանը հուսադրում է, որ պիտի գա «հույսի ու լույսի» հայրենիքը եւ իր մեծ խոսքն ասի աշխարհին.

17 Գաղտնավանկի ռ-երը, որ ժամանակին ընդունված էր գրել, գեղջված են:

18 Անգամ այս դեպքում Թումանյանի բանաստեղծությունը չի համապատասխանում սփյուռ-բահայ գրականագետի հետեւյալ դիտարկմանը. «Քսաներորդ դարու մեր գրականությունը դարձաւ լացի, արցունքի, վիշտի ու տառապանքի գրականություն մը» (**Վ. ԹԷՔԷՏԱՆ**, Բանաստեղծություններու հատընտիր, խմբագրում եւ ներածական՝ **Երուանդ Ազատեանի**, Երեւան, 2012, էջ 140):

*Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հնի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարադետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին -
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:*

Կենսասեր բանաստեղծը հուսադրում է մարդկանց, անգամ ծանր ապրումների մեջ՝ նա վերածննդի պատգամն է բերում հուսահատության մեջ հայտնված իր ժողովրդին: Հայոց դժվարին պատմության ամենադժնդակ ու սեւ ժամանակաշրջանում գրված բանաստեղծությունը Մեծ լուռեցին ավարտում է անսպասելի եւ անսասան լավատեսությամբ ներշնչող մակդիրներով՝ «նոր հայրենիք, հզոր հայրենիք».

*Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հագա՛ր-հագար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պրեռներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք¹⁹,
Հզո՛ր հայրենիք...*

Բանաստեղծի առինքնող լավատեսությունը մեծ խորհուրդ է հաղորդում բանաստեղծությանը՝ դառնալով հայ ժողովրդի բարձր ու վսեմ տենչերի գեղարվեստական յուրօրինակ ամփոփումը: Միանգամայն ճիշտ է այն տեսակետը, թե

¹⁹ Զարմնալի է, բայց ունենք սրան հակադրվող **հին հայրենիք** մակդրային կապակցությունը.

***Հին հայրենիքի** մեղեդիներն հին
Մեղմ կարկաչեցին առվակների պես.
Գուսանը վառման՝ երգեց սրտագին
Ճերմակ լեռների կատարները վես:*

(Ավ. Բսահակյան, «Հայրենի հողը»)

Հմմտ. նաեւ Ավ Բսահակյանի «Հայաստանին» (1921 թ.) բանաստեղծության այս քառատողը.
*Բարեկամներից վաճառված, անիրավված ի՛նձ հայրենիք,
Ոսոխներիդ կրունկի տակ ավերակված ո՛րք հայրենիք,
Սարսափներով, եղեռներով հավերժացած հի՛ն հայրենիք,
Արյունիդ մեջ սուրբ իրավունք, հոգիդ արեւ, ի՛նձ Հայաստան:*

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը մակդիրների ընտրության բոլորովին այլ մոտեցում է որդեգրել:

«այս տողերը ոչ միայն տվյալ բանաստեղծության, այլև Թումանյանի հայրենասիրական քնարերգության, նրա ողջ պոեզիայի հանրագումարն են»²⁰:

Բանաստեղծության մակդիրների աստիճանական փոփոխությունները ներքին հանգ են կազմում եւ ապահովում զգացմունքների եւ տրամադրությունների ընթացքը՝ հայրենիքի ողբերգության հանդեպ բանաստեղծի անսահման վշտից մինչեւ անկրկնելի լավատեսություն: Հուսահատության նշույլ իսկ չկա ողջ բանաստեղծության մեջ, թեպետ առաջին տներում, երբ ներկայացնում է Հայաստանի եւ հայության խտացած պատմությունը, դիպուկ ընտրված մակդիրներն այսպես ասած դրական չեն՝ «զարկված հայրենիք, զրկված հայրենիք» եւ «ողբի հայրենիք, որբի հայրենիք»:

Բանաստեղծության կառուցվածքը եւ մակդիրների այսպիսի ընտրությունը հուշում է յուրատեսակ աստիճանավորման մասին²¹: Ընթերցողը մտովի քայլ առ քայլ անցնում է հայոց պատմության քառույլներով՝ «զարկված ու զրկված հայրենիքից» հասնելով մինչեւ «նոր եւ հզոր հայրենիք»: Մակդիրների առաջին զույգերը բացասական լիցքեր ունեն²², հաջորդ երկուսը եւ հատկապես վերջինը՝ ընդգծված դրական, ուստի ամբողջական տպավորությունն ու ազդեցությունը դրական եւ լավատեսական են²³:

Ավելորդ չենք համարում նշել, որ առաջին զույգ մակդիրները՝ «զարկված ու զրկված», ձեւավորվել են հարակատար դերբայով, երկրորդ եւ երրորդ զույգերը՝ «ողբի եւ որբի», «հույսի եւ լույսի»՝ սեռական հոլովով, վերջինը՝ անձականով՝ «նոր եւ հզոր», ընդ որում դրանք բացառապես միավանկ եւ երկվանկ բառեր են: Բանաստեղծությանը պատկերավորություն հաղորդելու առումով նշված հանգամանքները որեւէ դեր չեն խաղում, բայց անշուշտ կարեւոր են բազմազանության տեսանկյունից: Ակներեւ է, որ այս մակդիրներին միավորողը պարզությունը, բովանդակայնությունը եւ պատկերավորությունն են:

Հնչյունական ձեւավորմամբ կարճ, համագործածական այս բառերը դիպուկ եւ խոսուն մակդիրներ են, գուցեւ առավել պատկերավոր, քան բանաստեղծական, հազվադեպ կամ նորակազմ բառերով ձեւավորված շատ մակդիրներ: Նման մակդիրներ քննարկվող բանաստեղծության տարբեր մա-

20 Է. Մ. Զրբաշյան, Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, Երեւան, 1982, էջ 43:

21 Նույն իրողությունը կա ավելի վաղ՝ 1902-ին գրված «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ՝ *հայոց լեռներում, դժար լեռներում, հայոց լեռներում, արևոտ լեռներում, հայոց լեռներում, բարձր լեռներում* եւ վերջապես՝ *հայոց լեռներում, կանաչ լեռներում*:

22 Բացասական բնորոշման տեսանկյունից եզակի է Հին աշխարհի պատմությունից հայտնի այս բնորոշումը՝ **ապերախոս հայրենիք**: Հռոմեական զորավար Պուբլիոս Կոռնելիոս Սկիպիոն Աֆրիկացին (մ.թ.ա. մոտ 235-183), որը հաղթել էր Հաննիբալին, բայց հանիրավի աքսորված էր, կտակում է իր գերեզմանաքարի վրա գրել՝ «**Ապերախոս հայրենիք**, դու տեր չախտի լինես իմ ոսկորներին»: Հայ բանաստեղծական խոսքում հայրենամերժ նման կիրառություններ չեն հանդիպում:

23 Այս առումով կարելի է գուգահեռներ անցկացնել Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մակդիրների հետ (տե՛ս Ա. Մաթեան, Չարենցի «Ես իմ անուշ...»-ը եւ հայ հաւաքական հոգեբանությունը / «Հանդէս» (Թեհրան), 2008, հ. 19-20, էջ 71):

սերում կան, ինչպես՝ *աղեկեզ թառանհ, ծաղկավառ դաշտեր, անժպիտ հայացքներ, չարաղետ տանջանքներ, լուսապայծառ հոգիներ, երկնահաս բարձունք, կենսաժպիտ շողեր* եւ այլն: Սրանք գեղարվեստորեն հաջողված են, բովանդակալից եւ պատկերավոր: Բայց ամբողջ բանաստեղծության համար առանցքային են, անշուշտ, *հայրենիք* բառի մակդիրները. նրանք կարեւորագույն դերակատարություն ունեն ստեղծագործության կառուցվածքի մեջ:

Թումանյանն այս բանաստեղծության մակդիրների համակարգն ստեղծելիս հաղթահարել է 1890-ականների իր ստեղծագործություններին բնորոշ «զարդարուն, մակդրային խոսքի»²⁴ սովորույթը: Այժմ խոսքի պատկերավորության եւ արտահայտչականության կրողը բառիմաստի հարստությունը եւ բազմաշերտությունն է, նորովի ըմբռնվելու հնարավորությունը եւ մշտական թարմությունը:

Քննարկվող բանաստեղծության մեջ նույնիսկ հեղինակային նորակազմ բառ կա՝ *կենսաժպիտ*²⁵, սակայն *հայրենիք* բառի մակդիրների մեջ այդպիսին չկա: Գործածված մակդիրները հայոց լեզվի մեջ վաղուց ի վեր ամրակայված համագործածական, ոճականորեն չեզոք բառեր են, ընկալման տեսանկյունից՝ մատչելի, դյուրին: Սա մեկ անգամ եւս փաստում է, որ մակդրի գեղարվեստական արժեքը որոշելիս առաջնային պետք է համարել նրա պատկերավորությունը, ոչ թե բառի վերամբարձությունը, «բանաստեղծականությունը», ճոռոմությունը եւ այլ հատկանիշներ:

Ուշագրավ է, որ մակդիրների կատարյալ այս համախումբը ներկայացնելուց հետո Հովհ. Թումանյանը հետագայում դրանիցից ոչ մեկը չի գործածել իր գեղարվեստական խոսքում:

Հետաքրքրական է իմանալ, թե այս մակդիրներն ինչպիսի՞ ճակատագրի արժանացան, գործածվե՞լ են այլոց կողմից, յուրացվե՞լ են հայագիր եւ հայախոս հանրության կողմից եւ դարձել համընդհանուր լեզվի պատկերավորման համակարգի միավորներ:

Այդ մակդիրները, պարզվում է, երկրորդ կյանք են ձեռք բերել: Դիտարկենք բնութագրական այս օրինակները²⁶.

Քառասունհինգ տարի է անցել ընդամենը, եւ որբի ու ողբի հայրենիքը դարձել է հույսի ու լույսի հայրենիք, աշխարհի բոլոր հայերի միակ հայրենիքը («Գրական թերթ», 15.10.1965):

24 Ս. Ա. Մելքոնյան, Հովհ. Թումանյանը եւ արեւելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երեւան, 1986, էջ 314:

25 Այս բառերի մասին հանգամանալից տե՛ս Դ. Գյուրջինյան, Դիտարկումներ Հովհ. Թումանյանի հեղինակային նորակազմությունների շուրջ (Բանբեր Երեւանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի, հ. 2, Երեւան, 2010, էջ 48-57):

26 Բնագրային օրինակներ որոնելիս օգտվել ենք ԱՐԵՎԱԿ-ից (Արեւելահայերենի ազգային կորպուս), www.eanc.net:

....եւ դուք ձեզ համարում եք հայրենասեր եւ դեռ երագում ե՞ք հայրենիքի փառքի ու մեծության մասին. **Իմ նո՛ր հայրենիք, հզո՛ր հայրենիք...** Ինչպե՞ս չէ (Զ. Դարյան, «Քառուղիներ»):

Քննարկվող մակդիրները քաջամանթո են հայերեն ընթերցող հանրությանը, սակայն առ այսօր կրում են թումանյանական կնիքը եւ որեւէ գործածություն միշտ հիշեցնում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը: Ուստի եւ պատահական չէ, որ երբեմն խոսքաշարում հիշատակվում է Թումանյանի անունը, կամ էլ տվյալ մակդիրները վերցվում են չակերտների մեջ՝ համարվելով ինքնատիպ մեջբերումներ: Այսպես. «Սովետական Հայաստանին բաժին ընկալ քարքարոտ ու մեռյալ հողի մի բեկոր, որի մասին Հովհաննես Թումանյանն ասում է «**Ողբի հայրենիք, որբի հայրենիք**»: Եվ ես, ճանապարհորդելով երկրում, ուզում եմ տեսնել, թե ինչ է կատարվել «**ողբի հայրենիք, որբի հայրենիքում**»: Յոթ հարյուր հազար մարդ էր մնացել **ողբի ու որբի հայրենիքում**, քաղցած, անօթեւան» (Զ. Բալայան, «Օջախ»):

Իսկ Ս. Կապուտիկյանի «Գրական քսանհինգամյակիս առթիվ» բանաստեղծությունում մեկ միավորի մեջ «ծուլվել են» թումանյանական **նոր հայրենիք** եւ **հզոր հայրենիք** մակդիրները.

*Մեր խլյակներն ու լաստերը բեկված, -
Ես՝ ոտքերիս տակ հողը հայրենյաց,
Ու մեր դրոշի շուքը՝ իմ վերեւ, -
Թիկունքիս՝ մի **նոր, հզոր հայրենիք...***

Թումանյանական ակնհայտ ազդեցություն ենք նկատում Կապուտիկյանական նաեւ այս տողերում.

*Փնտրելով միայն աղոթք ու անդորր,
Մրմունջն եմ հիշում քո սուրբ վանքերի,
Իմ **լո՛ւյս հայրենիք**, իմ **հո՛ւյս հեռավոր**:*

Բանաստեղծուհու մտքի ծալքերում եւ երեւակայության մեջ անշուշտ «նստած են եղել» **հույսի հայրենիք** ու **լույսի հայրենիք** մակերային կապակցությունները: Պարզեիպարզ նկատելի է. նույն գոյականներն են. Թումանյանը դրանք գործածել է թեք հոլովաձեւով, Կապուտիկյանը՝ ուղիղ: Անտարակույս, ինչպես իմաստային, այնպես էլ պատկերավորության առումով սրանք էապես տարբերվում են միմյանցից (հատկապես որ **հայրենիք**-ը երկու անգամ չի գործածվել):

Այնուհանդերձ հարկավոր է գգույշ լինել եւ առաջին հայացքից տեսանելի նմանությունից շուտափույթ եզրակացությունների չհանգել: Այսպես.

*Եվ իսկապես էլ՝ սա երկիր է մե՛ծ,
վիթխարի՛ աշխարհ,
հայրենիք հզո՛ր:
(Պ. Սեւակ, «Եռաձայն պատարագ»)*

Թումանյանական է **նոր հայրենիք, հզոր հայրենիք** գուգադրությամբ մակերային կապակցությունը, բայց ոչ առանձնաբար գործածված **նոր հայրենիք**-ը կամ **հզոր հայրենիք**-ը (եւ էական չէ՝ շարադասությունն ուղիղ է, թե շրջուն): Այստեղ կարելի է խոսել սոսկ հնարավոր ազդեցության մասին:

Հետաքրքրական է, Թումանյանը միայն «Հայրենիքիս հետ» բանաստեղծությամբ մեջ է **հայրենիք** բառի մակդիրներ գործածել: Անշուշտ ոչ: Ահա մեկ օրինակ «Հառաչանք» պոեմից.

*Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձեւերով,
Ոգևորության հզոր թեւերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՛ք իմ հեզ²⁷:*

Թումանյանի լեզվում (ինքնուրույն եւ թարգմանական ստեղծագործություններում) հանդիպում են **հայրենիք** բառի նաեւ ուրիշ մակդիրներ՝ **սուրբ**²⁸, **վշտակիր**, **ծաղկավետ**, **խրոխտ**, **վեհապանձ**, **սիրուն**, **մուր ու խափար**, **հալածված**: Դրանցում մակդիրները հիմնականում առանձին են հանդես գալիս եւ այն ուժն ու գեղագիտական, հուզական արժեքը չունեն, որն ամբողջ է «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մեջ: Ուստի կարող ենք ասել, որ մակդիրներ կերտելու բանաստեղծի փորձը հմտորեն ամփոփված, եւ խտացումներն արված են հենց նշված բանաստեղծության մեջ, եւ **հայրենիք** բառի ինքնա-

27 Հմմտ. հայ քերթության մյուս հսկայի՝ Ավ. Իսահակյանի հետեւյալ տողերի հետ.

*Ցորենի ծփուն արտերի եզրին
Կանգնել խորհում եմ սրտիս մեջ լրին -
Մի՛թե դու չէիր, հայրենիք իմ հեզ...* («Հայրենիքիս»)

Սա երկու մեծ բանաստեղծների պատկերավոր մտածողության ընդհանրության եւ ժամանակի իրականության նույնական ընկալման լավագույն վկայություններից է: Եվ, անշուշտ, նաեւ հայ լեզվամտածողության մեջ ամրակայված պատկերի:

28 Գործածել է նաեւ Ավ. Իսահակյանը.

*Եվ ժողովրդի քնարը ազնիվ
Փառաբանել է անունը նրա,
Հաղթանակները փայլուն ու անթիվ
Սուրբ հայրենիքի ոսոխի վրա...* («Հայրենի հողը», 1920 թ.)

Արձակում ավելի վաղ՝ նաեւ Բաֆֆին. «Տե՛ր, դու օրհնե մեր ազգը, մեր **սուրբ հայրենիքը** եւ մեր ազգայնությունը անջնջելի պահպանիր, քանի արելը լույս է տալիս երկնականարի վրա» (Բաֆֆի, «Մալրի»):

տիպ ու բանաստեղծի գեղարվեստական մտածողությունը բնորոշ մակդիրները²⁹ հենց դրանք են, իրենց ամբողջականությամբ եւ համակարգայնությամբ:

Գեղարվեստական խոսքի ավանդույթներ կան, եւ հեղինակներն աչքի առաջ ունենում են նախորդների փորձը: Էլ չենք խոսում այն մասին, որ շատ ու շատ դեպքերում այս կամ այն մակդիրն արդեն ամրակալված է լինում ստեղծագործողի ենթագիտակցության մեջ: Այս դեպքում դժվար է խոսել ընդօրինակման, նույնիսկ ազդեցության մասին:

Միանգամայն հնարավոր է, որ ակնհայտ նմանության պարագայում անգամ գործ ունենանք ստեղծագործական ինքնություն լուծումների հետ: Նալբանդյանական **թշվառ**, **անտեր հայրենիք**-ից հետո, օրինակ, սպասելի էր **դժբախտ հայրենիք**-ը.

*Իմանալով, որ իր դժբախտ հայրենիքում վիշապացել
Ու խժոռում է բռնակալի դեռ երեկվա բարակ օձը: (Պ. Սեւակ, «Ներում եմ»)*

20-րդ դարի բանաստեղծները հայրենիքը շատ հաճախ բնորոշում են **մայր** եւ **սուրբ** մակդիրների միջոցով: Սրանք կայունացած մակդիրներ են: Հովհ. Շիրազը, օրինակ, **հայրենիք** բառի համար դրանք էր նախընտրում.

*Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա... («Իմ սուրբ հայրենիք»)
... Թե պանդուխտ մնան հայրերն իմ թափառ,
Թե գիրկդ չգան, իմ մայր Հայրենիք:*

Պատահական չէ, որ շիրազյան տողերում հայրենիքը նույնացվում է մոր կերպարին, իսկ երբեմն էլ համեմատության միջոցով ձեւավորված մակդիր ենք տեսնում: Այսպես.

*Իմ մայր հայրենիք, թե մայր ես եւ դու՝
Մի թող պղտորեն սիրտը քո որդու...*

*Մորս նման քաղցր ու ազնիվ իմ հայրենիք,
Հովեր ունես մորս քնքուշ ձեռքի նման...*

Կան **հայրենիք** բառի այնպիսի մակդիրներ, որոնք առաջին հայացքից կարող են նույնիսկ արտառոց թվալ. եթե կտրված են համատեքստից: Այդպիսիք են **բնիկ** եւ **ծանր** մակդիրները, որոնք իմաստավորվում են միայն խոսքաշարում.

29 Ուշագրավ է բանաստեղծի խոստովանությունն իր ստեղծագործական վաղ մի շրջանի լեզվական մոտեցման մասին. «Այս թե ձեռք ընկան Հյուսիսատիպայան համարները, որ շատ սիրեցի: Սա իր բոլորովին ծոցի իմ ճամփից – սկսեցի շինծու լեզվով խորհրդածություններ անել ազգի վիճակի վրա, գործածել գեղեցիկ բառեր, գիշերատեսիլ եւ այլն, եւ այլն բառերը» (Թումանյան: Ուսումնասիրություններ եւ հրապարակումներ, հ. 2, Երեւան, 1969, էջ 421):

Անցնելով փշոտ ճանապարհները առի եւ փախի՝
 Բորիկ ոտքերին կծկել են նրանք
 Իրենց հայրենի գետակն ու առուն,
 Ցավից մշուշված իրենց աչքերում
 Տարել են իրենց ծուխը ծխանի
 Եվ իրենց հոգնած շալակին առել
 Ոչ միայն մանչին կամ մի մազադաթ,
 Այլ մի բովանդակ... **բնիկ հայրենի՛ք,**
 Մի ծա՛նր, ծա՛նր, **ծա՛նր հայրենիք...**
 (Պ. Մեւակ, «Հայուհիները»)

Անշուշտ տպավորիչ է, սակայն դժվար է պատկերացնել այս մակդիրների երկրորդ կիրառումը:

Ամենեւին հակված չենք նման բոլոր կիրառությունները հաջողված, առավել եւս պատկերավոր համարելու: Երկու օրինակ Հովհ. Շիրազից.

Թող հացս դառնա վշտի մի պատառ
 Թե կիսված մնաս, իմ Հայաստանիկ,
 Թե գիրկդ չգան որդիքդ թափառ,
 Թե չծովանաս, իմ **գետ հայրենիք...**
 Կա Հայաստա՛ն մի գահագուն,

Կա միաթագ, միակնիք
Հազարաբերդ մի Հայրենիք...

Իսկ Ս. Կապուտիկյանը, վերոհիշյալ բանաստեղծության մեջ հայ բանաստեղծի դերի մասին խոսելիս, **հայրենիք** բառի անսովոր մակդիրն ընտրել է ամենայն հավանականությամբ տարբեր արտահայտչամիջոցների (բառախաղ, կրկնություն) թելադրանքով.

Երբ ինչպես մոմը մատուռում **խարխուլ,**
 Այրվե՛լ են նրանք, հարվե՛լ, ապառվե՛լ,-
Խարխուլ հայրենիք, ժողովուրդը՝ **խուլ,-**
 Ու հույսն ու լույսը նրա՛նք են տվել:

Այստեղ էլ՝ վերջին տողում, թումանյանական հետք կարելի է նշմարել:

20-րդ դարի եւ մեր օրերի հեղինակները, այստեղ ներկայացվածներից բացի, **հայրենիք** բառի մակդիր են դարձրել մի շարք այլ բառեր (հիմնականում ածականներ), ինչպես՝ **շեն, խաղաղ** (Ն. Զարյան), **անհաս** (Գ. Մարյան), **անհուն** (Ս. Կապուտիկյան), **գորեղ ու կարող** (Պ. Մեւակ) **փառահեղ** (Դեւ), **փառավոր** (հ. Վ. Հովհաննիսյան), **լուսե** (Ա. Թարյան) եւ այլն: Ընդ որում՝ այդ մակդիրները գերազանցապես դրական բովանդակություն ունեն:

Լավագույն նմուշները տվել են դասականները: Ահա տողեր Ավ. Իսահակյանի տարբեր ստեղծագործություններից, որոնք գրվել են 20-րդ դարի տարբեր տասնամյակներում.

*Մեր լուսազարդ հայրենիքի սահմաններին առընթեր
Ոսոխները մեր չարամիտ՝ դավ են նյութում օր-գիշեր...
(«Հայրենի հողը», 1920)*

*Դու, երկնամերձ իմ հայրենիք,
դու, հինավուրց իմ Հայաստան...
(«Հայաստանին», 1921)*

*Էյիեյ, լսեցեք, վեհ հայրենիքի
Կտրիճ զավակներ, ժողովուրդներ քաջ...
(«Ռազմակոչ», 1941)*

*Քո սիրելի հայրենիքում նորագաւ.
Որ քեզ տվեց դյուցազնի կամք ու կորով,
Ամեն մի սիրտ մորմոքում է քեզ համար.
Եվ գլուխներն խոնարհում են հարգանքով:
(«Սիրելի հերոս Ս.Գ. Զաքիյանի անմահ հիշատակին», 1942)*

Որոշ դեպքերում նկատելի է ժամանակի, մասնավորապես խորհրդային գաղափարախոսության թելադրանքը: Այսպես.

*Եվ տանում ես հաղթանակից հաղթանակ
Հայրենիքը մեր անեղեքը, աննկուն...
(«Մեծ Ստալինին», 1939)*

Այդպես նաեւ այլ բանաստեղծների խոսքում՝ **քազմաժողովուրդ, կարմիր, անծայրածիր, վիթխարի** եւ այլն: Դրանք, բնականաբար, մնայուն հետք չեն թողել հայ խոսքարվեստում:

Կգան ուրիշ բանաստեղծներ, նոր պատկերներով ու ստեղծագործական գյուտերով կհարստացնեն հայ բանաստեղծական խոսքը: Մեկ բան, սակայն, անվիճելի է. այս հարցում Թումանյանն առ այսօր անգերազանցելի է:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются эпитеты слова *հայրենիք* “родина” в стихотворении Ованеса Туманяна “Вместе с моей родиной” в сравнении с эпитетами данного слова в творчестве армянских поэтов нового и новейшего периодов. Эпитеты Туманяна отличаются выразительностью, свежестью и самобытностью. Они до сих пор остаются непревзойденными.

SUMMARY

In the article the epithets of the word *հայրենիք* “motherland” in Hovhannes Tumanyan’s poem “Together with my Motherland” are being examined in comparison with the epithets of the given word in the art of the Armenian poets of the new and modern periods. Tumanyan’s epithets stand out with their expressiveness, freshness and originality. They still remain unequalled.